ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/9 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2025 թվականի կարիքների համար գրենական պիտույքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 28.11.2024թ. N 454/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 13.12.2024թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ.Կարապետյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Շ.Առաքելյանը, Ն.Խանամիրյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/9 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Մ.Կարապետյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/9 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «Մայ Մարկետ» ՍՊԸ-ն (ք. Երևան, Սաֆարյան-8/8)
3. «ԲԵՍԹ ՖԻՐՄ» ՍՊԸ-ն (ք. Վանաձոր, Գր.Լուսավորչի-53)
5. «Սմարթլայն» ՍՊԸ-ն (ք.Երևան, Վարդանանց-110)

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Չ/Հ	Մասնակիցների անվանումները	Ապրանքի անվանումը	Ներկայացրած գները ՀՀ դրամ			պլանավորվ ընդհանուր ՀՀ դրամ
				ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	ԱԱՀ	ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	
1	1	«Մայ Մարկետ» ՍՊԸ	Գրասենյակային լրակազմ	1 500 000	20%	1 800 000	3 000 00
2		«ԲԵՍԹ ՖԻՐՄ» ՍՊԸ		1 575 000	20%	1 890 000	
3		«Սմարթլայն» ՍՊԸ		3 333 333.34	20%	4 000 000	
1	2	«Մայ Մարկետ» ՍՊԸ	Հաշվասարք, գրասենյակային	500 000	20%	600 000	816 000
2		«ԲԵՍԹ ՖԻՐՄ» ՍՊԸ		593 200	20%	711 840	
3		«Սմարթլայն» ՍՊԸ		1 500 000	20%	1 800 000	

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

-Առաջին տեղը զբաղեցրած՝ 1-ին, 2-րդ չափաբաժիններով «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը, սակայն մասնակիցը հավելված 1.3-ում՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում սխալ է նշել գնման ընթացակարգի ծածկագիրը:

5. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Համաձայն ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/9 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/9 ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և համակարգի միջոցով ծանուցել «Մայ Մարկետ» ՍՊԸ-ին առաջարկելով՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

-Նիստը վերսկսել՝ 2024 թվականի դեկտեմբերի 17-ին, ժամը 10:00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ.Կարապետյան

Անդամներ՝ Շ.Առաքելյան

Ն.Խանամիրյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան